Ֆ. ՇԻԼԼԵՐ

ԼՈՂՎՈՐ

Ո՞վ ձեզնից՝ ասպետ կամ թե զինակիր
Կընկնի այստեղից անտակ ծովի մեջ,
Զգում եմ ահա գավաթն իմ ոսկի,
Այս գավաթն, ով որ անդունդի անվերջ
Խավարում գտնի ու անփորձ հանի,
Նրան հաղթության պարգև թող լինի։

Կանչեց թագավորն ու բարձր ժայռից,
Որ հակված է սև անդունդի վրա,
Էն բարձր ժայռի < . . . . . > ծայրից
Շըպըրտեց ներքև գավաթն իր ոսկյա.
— Ո՞վ է այն խիզախ, համարձակ հոգին,
Որ իմ գավաթը ետ բերի կըրկին։

Կանգնած են անշարժ զինակիր, ասպետ,
Լուռ են արքայի կոչին [խելագար],
Նայում են ահով ահռելի ծովին,
Զըկա խիզախող գավաթի համար,
Ու երրորդ անգամ կանչում է արքան —
Մի՞թե ոչ մինը սիրտ չունի այնքան։

Լուռ են ամենքը։ Եվ հանկարծ մի քաջ
Համարձակ ահեղ գալիս է առաջ...
Քանդում է իրան թիկնոցն ու գոտին
Անմռունչ, հանդարտ դընում է գետին...
Տիկնայք, ասպետներ սարսափում են լուռ.
— Ա՜հ, ո՞վ ես, ջահել, ո՞ւր ես գնում, ո՞ւր...

Մոտենում է նա ժայռին սեպացած,
Ներքև սևեռում հայացքն անվեհեր։
Անդունդքի ծոցից հորձանքը պրծած
Խուլ որոտալով լեռնանում է վեր,
Կուտակում ալիք, ու փրփուրն եռում,
Ասես թե մրթնած երկինքն է գոռում։

Ոռնում է, շաչում, ծեծում, շառաչում
Հուրն ու ջուրն ասես մրցում են այնտեղ,
Սյունաձև շոգին երկինքն է թըռչում,
Ալիքն ալիքին ճնշում է անվերջ,
Ոչինչ չի հատնում, ոչինչ չի անցնում,
Ծովը իրենից նոր ծով է ծնում։

Ետ քաշվեց հանկարծ տարերքը հուզված.
Ճերմակ փրփուրը միջից պատռելով,
Մինչև դժոխքի հատակը [ասես]
Բաց արավ ծովը կոկորդը սև սև,
Եվ պըտըտվելով ջըրերը թընդում
Ու կուլ են գընում էն սև անդընդում...